

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/9

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Մարգարիտա» ՍՊԸ 15.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.09.2015թ-ի թիվ 616 որոշման դեմ:

«Մարգարիտա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

17.09.2015թ-ին «Մարգարիտա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) ստացվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.09.2015թ-ի թիվ 616 որոշումը, որով պահանջվում է ընկերությունից գանձել 995.655 դրամ պարտավորության գումար:

Ստանալով այդ որոշումն ընկերությունը դիմել է ՀՀ ԱՆ ՊՌ գործակալություն, որտեղից 22.09.2015թ-ին ստացվել է պատասխան այն մասին, որ «Շուշան» ԱԿ-ն լուծարվել է 20.08.2012թ-ին: ՀՀՕ-186նհ օրենքի համաձայն, լուծարման գործընթացը սկսվել է 15.07.2011թ-ին:

Այդ տեղեկանքի բնօրինակը, ՀՀՕ-186նհ օրենքը բողոքարկման-իրազեկման նամակի հետ /5 թերթից/ 30.09.2015թ-ին ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն /մուտք 46226/:

2016թ. դեկտեմբերին բանկում ընթացիկ հարկերը վճարելու ժամանակ ընկերությունը տեղեկացել է, որ ԴԱՀԿ ծառայության կողմից ընկերության հաշվի վրա արգելանք է դրվել: Ընկերությունը փորձել է բացատրություն ստանալ ՀՀ ՖՆ ԻՎ և այլ ծառայություններից, սակայն որևէ ստույգ պատասխան չի տրվել:

Մտածելով, որ տեղի է ունեցել թյուրիմացություն, ընկերությունը 20.01.2016թ-ին դիմել է ՀՀ ՖՆ: ՀՀ ՖՆ ԻՎ-ից 10.02.2016թ-ին ստացված թիվ 1-7/11-7 պատասխան գրության համաձայն, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60, 70, 71, 80 հոդվածների դրույթները տեղեկացվել է, որ 11.09.2015թ. կայացված թիվ 616 որոշումը ուժի մեջ է մտել 18.09.2015թ-ին, այն օրենքով սահմանված ժամկետում և կարգով չի բողոքարկվել, ուստի 09.12.2015թ-ին ներկայացվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ 995.655 դրամ գումարի չափով բռնագանձում իրականացնելու համար: Փաստացի ՀՀ ՖՆ իրավաբանական վարչությունն ամեն գնով ուզում է «Մարգարիտա» ՍՊԸ-ից բռնագանձել 995.655 դրամ գումար:

Ընկերությունը հայտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.09.2015թ-ի թիվ 616 որոշումը ստացել է 17.09.2015թ. և 13 օր անց՝ 30.09.2015թ-ին, ՀՀ ՖՆ ներկայացրել է բողոքարկում 5 թերթից, որով հայտնվել է, որ «Շուշան» ԱԿ դեռ 20.08.2012թ. լուծարվել է, սակայն մինչ օրս պատասխան չի ստացվել: Ընկերությանը հայտնի չէ, թե որտեղից է գոյացել 995.655 դրամ գումարը: Եթե ընկերությանը 2012թ-ին հայտնվեր այդ խնդրի մասին, կներկայավեր լուծարման տեղեկանք և կփակվեր այս հարցը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է հանձնարարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչությանը ԴԱՀԿ ծառայությունից հետ կանչել 11.09.2015թ-ի թիվ 616 որոշումը՝ լրացուցիչ ճշտումներ կատարելու համար:

«Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Հ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Մարգարիտա» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 09.09.2015թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում է 995.655 դրամ, որից ապառք 390.836 դրամ, տույժ 213.983 դրամ, տուգանք 390.836 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 11.09.2016թ-ին ընդունվել է թիվ 616 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Մարգարիտա» ՍՊԸ-ից 995.655 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշմամբ գանձման առաջադրված չկատարված հարկային պարտավորությունը հաշվարկվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ ՀՎՍ բաժնի պետի «Մարգարիտա» ՍՊԸ-ին առաջադրվող հարկերի հաշվարկի վերաբերյալ տեղեկանքով (այսուհետ նաև՝ Տեղեկանք): Վերջինիս համաձայն, ՀՀ ՖՆ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «Մարգարիտա» ՍՊԸ-ի կողմից 2012թ-ի համար չէր կարող ներկայացվել շահութահարկի պարզեցված հաշվարկ, քանի որ ընկերության հիմնադիր Արմեն Տեր-Թովմասյանը (33% բաժնեմաս) 33% բաժնեմաս ունի հաշվառված նաև «Շուշան» արտադրական կոոպերատիվում: Տեղեկանքի համաձայն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընկերության կողմից 2012թ. համար ներկայացված շահութահարկի պարզեցված հաշվարկի համաձայն համախառն եկամուտը կազմել է 2.344.548 դրամ, Տեղեկանքով լրացուցիչ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար է հաշվարկվել ընդամենը 995.655 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ Տեղեկանքով ԱԱՀ-ի գծով հաշվարկված պարտավորությունը, ըստ էության, չէր կարող հիմք հանդիսանալ այն «Մարգարիտա» ՍՊԸ-ից ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.09.2015թ-ի թիվ 616 որոշմամբ գանձման առաջադրելու համար, հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ստուգման նպատակների մեջ է մտնում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ

իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու հարցերը, հետևապես նաև տնտեսավարող սուբյեկտի պարտավորությունների իրական չափը, կարող են պարզվել և գանձման առաջադրվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնելու և դրա արդյունքում համապատասխան ակտ կազմելու միջոցով:

Քննարկվող դեպքում տնտեսավարող սուբյեկտի՝ «Մարգարիտա» ՍՊԸ-ի, ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը և նրա ծավալած փաստացի գործունեության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու հարցերը, ինչպես նաև պարտավորությունների չափը որոշելու միակ հիմքը հանդիսացել է «Մարգարիտա» ՍՊԸ-ին առաջադրվող հարկերի հաշվարկի վերաբերյալ տեղեկանքը, ինչը, սակայն, չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.09.2015թ-ի թիվ 616 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ